ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 5—6 (10—11), Երևան, 1941 թ.

Հ. Դյուլի-Բեկյան

ՀԻՏԼԵՐԻ «ԻՄ ՊԱՅՔԱՐԸ» ՈՐՊԵՍ ՖԱՇԻՍՏ ՄԱՐԴԱԿԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հունիսի 22-ին գերմանական ֆաշիզմի հորդաները պատերազմական գործողություններ սկսեցին մեր մեծ հայրենիքի սրբազան սահմանները պաշտպանող հերոսական Կարմիր Բանակի դեմ։

Բացառիկ նենգությամբ, արտակարգ լկտիությամբ խախտելով մեր երկրի հետ կնքած իրար վրա չհարձակվելու պայմանագիրը՝ ֆաշիստական կլիկը վերցրեց ժամանակավորապես հագած իր դիմակը և նորից երևան հանեց իր էության ամբողջ գարշելիությունը։ Ֆաշիստական ագիտացիայի և պրոպագանդայի սիրած պրիոմներն ավելի խոշոր չափերով, ավելի զազրելիորեն սկսեցին կիրառվել. իրենց անսքող բանդիտային արարքը համաշխարհային հասարակական կարծիքի և գերմանական խաբված ժողովրդի առաջ արդարացնելու նպատակով՝ Հիտլերը և Ռիբենտրոպը հանդես եկան գեկլարացիաներով, որոնք ամբողջովին լի են խարդախությամբ ու ստախոսությամբ, զրպարտությամբ ու տմարդությամբ։

Ո՞վ է ձեռք բարձրացրել մեր երկրի վրա, ով է ցանկանում զրկել մեզ մեր աղատությունից, ի՞նչ նպատակներ է հետապնդում, ի՞նչ ծրագիր է ուզում իրականացնել գերմանական ֆաշիզմը։ Գուցե և ավերորդ է այս հարցադրումը և նրա պատասխանը, քանի որ ֆաշիստական պրակտիկան սպառիչ նյութ է մատակարարում նրա բնույթն ու էությունն ըմբռնելու համար։ Սակայն չպետք է մոռանալ, որ ֆաշիստ բորենիներն իրենց բարբարոսություններն արդարացնելու, պաճառաբանելու նպատակով, շատ են սիրում ճամարտակել իրենց ինչ-որ «իդեալների» մասին, իրենց ստեղծած ու ստեղծելիք ինչ-որ «կուլտուրայի» մասին։ Հարկավոր է ցույց տալ, թե ի՞նչ «թեորիական» բագաժով, ի՞նչ բարոյական չափանիշներով են հանդես գալիս գերմանական իմպերիալիզմի մունեաիկները, ի՞նչ «կուլտուրական» արժեքներ են առաջադրում և ի՞նչ մեթոդներով «աշխատում»։ Այդ տեսակետից չափազանց բնորոշ է ֆաշիստական «ավետարանը»։ Ֆաշիստների կողմից Գերմանիայի «առաջնորդ» հայտարարված Հիտլերը — որպիսի՞ ծաղր ու հեգնանք գերմանական ժողովրդի հասցեին — 1924 թվին գրում է «Իմ պայքարը» հորջորջված՝ վայրագության ու բանդիտիզմի կլասիկ ձեռնարկ հանդիսացող գիրքը։ Այս գրքի մեջ արտահայտված են ֆաշիստական մտքի «ամենանվիրական արժեքները», նրա առաջադրած ծրագիրը, նրա սոցիալական նպատակները և նրանք իրագործելու մեթոդներն ու պայմանները։

Ֆաշիզմը մարդակերության ուսմունք է, սակայն ֆաշիստներին բոլոր պարագաներում հնարավոր չէ մերկացած հանդես գալ։ Նայած տեղին և ժամանակին, մոմենտի հետապնդած նպատակին, ֆաշիստ «թեորետիկները» և ագիտատորները հարկադրված են լինում երբեմն դիմելու ամբոխավարական «նուրբ» պրիոմների, ծխածածկոց ստեղծելու արվեստին, երբեմն էլ ավելորդ համարելով դիմակավորումը և առանց պատե պատ ընկնելու, որոշակի ձևակերպում են իրենց բանդիտական ձգտումները։

Օքեր-բանդիտ Հիտլերն իր գրքի մեջ դրսևորում է երկու գիծն էլ։ Նա հաճախ բոլորովին մերկապարանոց է, նման է այն վայրենուն, որ իր թշնամիների կտրված գլուխները ձեռներին պարում է խարույկի շուրջը, մեկ էլ ոգնու պես գլուխն իրեն է քաշում և լրջորեն «խորհրդածությունների» մեջ ընկնում և սոցիալական երևույթների «անալիզը» կատարելու անզոր ոգ ու ջանք թափում։ Սարսափելի տգետ է, հիվանդոտ հավակնություններ ունեցող, մեծ անհատ լինելու մարմաջով բռնված այդ ճիվաղը։ Ուլտրա-ինդիվիդուալիզմի տրանսի մեջ ընկած, այդ թերուս նորելուկը առաջ է քաշում իր նողկալի «եսը» և սնապարծության ու մեծության մանիայի վակխանալիա սարքում։

Հիտլերի անունն առաջին անդամ լսվում է գերմանական նոյեմբերյան ռեվոլուցիայի պարտությունից հետո, այն ժամանակ, երբ սոցիալ-ֆաշիստ Էբերտների և Շայդեմանների թևի տակ ծնունդ առան և մեծացան բազմաթիվ հակառևոլուցիոն կազմակերպություններ, որոնց գլխավոր հարվածն ուղղված էր բանվոր դասակարգի դեմ։ Ամենից ուժեղ հակառևոլուցիան խլրտում էր Մյունխենում, որը գերմանական ռեակցիոն ուժերի կենտրոնը դարձավ, Բավարիայի սովետական իշխանության անկումից հետո։

Ահա այս քաղաքում է, որ Հիտլերն սկսեց իր «գործունեությունը»։ Սկզբում նա անդամ էր մի հրոսակախմբի, որը բանվորներ էր սպանում, տեռորներ կազմակերպում։ Նա աչքի է ընկնում իր «ընդունակություններով»։ Բավարական ոստիկանությունը նրան տալիս է ագենտ-պրովակատորի պաշտոն։ Տեսնելով նրա «ժրաջանությունը», բավարական ոստիկանական գեներալներն ու զինվորական մարմիններն առաջ են քաշում նրան և հանձնարարում ավելի պատասխանատու «գործեր»։ Հիտլերը դառնում է հակառևոլուցիայի ագիտատոր։ Նա սկսում է հռչակ ձեռք բերել սուտենյաքների, գողերի, բավարական կուլակների և իր նման բանդիտների, ավանտյուրիստների շրջանում։ Նա ընդարձակում է իր «գործունեության» շրջանակները. և շուտով բազմաթիվ հակառևոլուցիոն կազմակերպությունների թվին ավելանում է մի նորը. Հիտլերն իր բանդիտների հետ միասին հիմք է դնում գերմանական ֆաշիստական կամ, ինչպես իրենք են ասում՝ նացիոնալ-«սոցիալիստական» կազմակերպության։

Սկզբնական շրջանում Հիտլերի կոնտինգենտն այնքան էլ մեծ չէր, ակնհայտ հակառևոլուցիոն տարրերն արդեն ներգրավված էին այլ կազմակերպությունների մեջ. բացի դրանից՝ բուրժուազիան դեռ լայնորեն չէր ծանոթացել ֆաշիստ ջարդարարների «առաքինություններին», դեռ համը չէր առել նորաբույծ կազմակերպության «հոգեպարար» մեթոդների ու պրիոմների։

Ֆաշիստապետը մտածում է դիմել այնպիսի միջոցների, որոնցով կարողանար լայնացնել և ամրապնդել իր սոցիալական պատվանդանը։ Այդ բանդիտը, որ կատաղի ատելությամբ և արհամարհանքով է վերաբերվում դեպի ժողովուրդը, որ սիրում է գործ ունենալ գեներալների և քրեական տիպերի հետ, իր հայացքն ուղղում է դեպի գերմանական ժողովուրդը և կուրծքը ծեծելով հայտարարում, թե ինքն է միայն նրա շահերի պաշտպանը, նրա մտքերի թարգմանը։ Այդ չի խանգարում կատաղած շանը իր բանդիտներին հայտարարելու, որ «ժողովուրդն ստրուկ է, միայն քչերն են կոչված տիրողներ լինելու»։

Գիտակցելով, որ բանվորների մեջ իր հակահեղուցիոն շաղակրատանքը ոչ մի հաջողություն չի կարող ունենալ, Հիտլերն աչքը տնկում է քաղաքի և գյուղի բուրժուազիայի որոշ շերտերի վրա, չմոռանալով նաև բատրակների հետամնաց հատվածներին և բանվորության ապաղասակարգայնացած շերտերին։ Նա ձևականորեն փոփոխության է ենթարկում իր ծրագրի մի քանի կետերը և ձեռնարկում այդ տարրերի համապատասխան «վերամշակմանը»։

Գարեջրատների ամբոխավարն իր նախկին բացահայտ բանդիտական ագիտացիայի մեջ մտցնում է նոր մոտիվներ։ Նա արվեստ է դարձնում ամբոխավարությունը և հետևողականորեն դրսևորում ֆաշիստներին հատուկ բարոյական ատրիբուտները — ստախոսությունն ու խարդախությունը, միամիտների աչքին փոշի փչելը և գրգռիչ պրովոկացիոն տրամադրություններ առեղծելը։

Հիտլերը ճանաչում էր իր «նորակոչիկ»-ին — նա ծանոթ էր այդ մանր բուրժուազիայի հոգեբանությանը, նա հասկանում էր, թե ինչով պետք է ներգրավի այդ մարդկանց։ Աջ և ձախ խոստումներ սփռելը դառնում է նրա ամբոխավարության առանցքը, այդ խոստումներով է նա սկսում բազմացնել իր շարքերը։ Առաջին հերթին «վերամշակման» են ենթարկվում Վերսալի դաշնագրից գաղգաղած, պրոլետարական ռևոլուցիայից ահաբեկված, կապիտալի արշավանքից խուճապի մատնված, իրենց վաղեմի բարեկեցությունը կորցրած քաղաքային միջին և մանր բուրժուազիայի նացիոնալիստորեն տրամադրված տարրերը։

Երկրորդ հերթին Հիտլերի ամբոխավարության օբեկտ են դառնում գյուղական մանր բուրժուազիայի որոշ հատվածներ, որոնք նեղվում և ճնշվում էին բազմաթիվ տնտեսական հարկադրանքներից։ Ընկած բանկերի, խոշոր հողատերերի և կուլակների հարվածների տակ, գյուղի այդ խավերը հուսահատորեն էին նայում իրենց ապագայի վրա։ Եվ ահա Մյունխենից եկած ագիտատորները «մխիթարում» էին նրանց, հորդորում էին աջակցել իրենց՝ խոստանալով վերացնել նրանց ծանր վիճակը։

Սոցիալ ֆաշիզմի բարեհաճ թույլտվությամբ Մյունխենի դարչնագույն տանը նստած բանդիտը ժամանակի ընթացքում նկատելի հաջողություններ է ձեռք բերում։ Նա արդեն լրջորեն մտածում է իշխանության գլուխն անցնելու և իր հրեշավոր ծրագիրը իրականացնելու մասին։ Իր շարժման առաջին էտապից Հիտլերը կապ է ստեղծում ծանր արդյունաբերության, բանկերի և հողային մագնատների հետ։ Նրան սկսում են հաշվի առնել, չէ՞ որ

նա մի սովորական բանդիտ չէ, նա իր հետևից «մասսա» է տանում, նա ոչնչացնում է ռևոլուցիոն բանվորներին և բացահայտորեն երկրորդ իմպերիալիստական պատերազմ քարոզում։ Նրան տալիս են հսկայական դրամական միջոցներ, որ կարողանա ստվարացնել գրոհային ջոկատների անվան տակ իր կազմակերպած անլեգալ կանոնավոր բանակը։

Ի՞նչ «իդեոլոգիական» սնունդ է մատակարարում ֆաշիստական հրոսակապետը իր «կտակարանում», մի սնունդ, որը համապատասխան կորեկտիվների ենթարկած, մատուցվում է և հետագայում, երբ ֆաշիստական կլիկի ձեռքն է հանձնվում կառավորության ղեկը։

Հիտլերը, ինչպես և իր արբանյակները, թեորիա չեն սիրում, թեպետ և մասսային շլացնելու և «մշակելու» համար երբեմն անզոր փորձեր են անում թեորիական մարգանքներ կատարել։ Ֆաշիզմը գիտության ծայրահեղ հակադրությունն է։ Ֆաշիստ բանդիտներն ատում են գիտությունը և փախչում նրանից, որպես ժանտախտից։

Ֆաշիստական «գիտությունը» իր անկմանը դիմած բուրժուական մտայնության ծայրահեղ արտահայտությունն է։ Այդ «գիտությունը» հետազոտություն չի կատարում, ճշմարտությունը դրսևորելու ոչ մի տվյալ չունի, նա առաջարկում է դեղատոմսեր, որոնք զարհուրելի են իրենց ռեակցիոնականությամբ և թունոտ՝ իրենց մարդակեր բովանդակությամբ։

Մտքի ինքնուրույնությունը բնավ էլ հատուկ չէ ֆաշիստ գիշատիչներին, նրանք կերակրվում են ուրիշի սեղանի փշրանքներով, որդեգրելով ամենահետադիմական «թեորիաները» և կուլտուրայի դեմ արշավանք կազմակերպող աշխարհայացքը։

Հիտլերի «Իմ պայքարը» այդ մտայնության կլասիկ օրինակն է։ Նրա գիրքն ամբողջովին մարմնավորում է գարեջրատնային «պատմափիլիսոփայությունը», որի լայտմոտիվներն են՝ գրգռիչ պրովոկացիան, լրբենի զրպարտությունը և խուլիգանական սպառնալիքները. նա ճանաչում է իր աուդիտորիան, տեղյակ է նրա պահանջներին։

Որպես գրական գործ՝ սարսափելի, ձանձրալի, տաղտկալի է մտքի այդ վիժվածքը։ «Իմ պայքարը» մի աղաղակող դոկումենտ է այն մասին, թե ինչ որակի է հասել կապիտալիստական իդեոլոգիան Ֆիխտեի և Հեգելի երկրում։

Այդ գիրքը գրելիս՝ հիվանդ ուղեղի տեր մանիակ Հիտլերն աչքի առաջ է ունեցել հոգնած, դիմադրությունից զուրկ մարդկանց։ Իզուր չէ, որ ելնելով իր փորձից, նա խորհուրդ է տալիս իր համհարզներին՝ ճառերով հանդես գալ հասարակության առաջ միայն այն ժամանակ, երբ մութն ընկած է։ Զէ՞ որ ցերեկով մարդկանց միտքը դեռ թարմ է, նրանք հեշտությամբ չեն ենթարկվում ամբոխավարական հիպնոսին և իրենց հարցերով շփոթեցնում են ֆաշիստ հռետորին։

Հիտլերի «գիտությունը», նրա սոցիալական «անալիզի», «խորհրդածությունների» ելակետը տխրահռչակ ռասայական «թեորիան» է։ Սա է այն մոգական գավազանը, որով նա ձեռնածություններ է անում իր բանդիտական լաբորատորիայի գաղտնիքները բաց անելիս։

Որպես սպեկուլյանտ, նա ձեռք է բերել այն ապրանքը, որի վաճա-

ռումից մաքսիմալ շահ պիտի ունենա։ Չկա մի այլ ռեակցիոն «թեորիա», որից ավելի շատ մարդակերական հետևություններ արված լինեն, որքան այդ այսպես կոչված ռասայական թեորիայից։ Սրանով էին պատճառաբանում իմպերիալիստական քաղաքագետները և նրանց «գիտնական» դամբաշները այն ամեն տեսակի վայրագություններն ու սրիկայությունները, որոնց ղեհ էր դառնում գաղութային երկրների բազմամիլիոն աշխատավորությունը։ Նրա մեջ էին ամենից ցայտուն կերպով ի հայտ գալիս մոնոպոլիստական կապիտալի շրջանում բուրժուական իդեոլոգների սանձարձակ շովինիզմը և հակառակորդին ոչնչացնելու քարոզը։ Այդ «թեորիան» սիրով որդեգրեցին ֆաշիստական դահճապետները, նա ամենից հարմարն էր իրենց գազանային հակումները հիմնավորելու, իրենց բանդիտական քաղաքականության էությունը դրսևորելու տեսակետից։ Նրանք ավելի համարձակ, ավելի ստահակ եզրակացություններ արին այդ «թեորիայից», ավելի բարձրաձայն և մերկապարանոց հայտարարեցին այն, ինչի մասին իրենց նախորդները խոհեմություն էին համարում լռել կամ միայն ակնարկել։ Բանդիտներն սպիտակ ձեռնոցներով չմոտեցան ռասայական «գիտությանը», նրանք գնահատեցին նրա անմիջական ուտիլիտար «արժեքը»։

Իր «Տեսակների ծագման» մեջ Դարվինը արծարծում է կենդանական աշխարհում անընդհատորեն տեղի ունեցող գոյության կռվի խնդիրը։ Մեծ բնագետի այս կարևորագույն թեզը, որը կիրառվում է բիոլոգիայի բնագավառում, համապատասխան կերպով «օգտագործեցին» մտքի մի շարք շառլատաններ, կապիտալիզմի ապologետներ։ Մարդկային հասարակությունը նույն կենդանական աշխարհն է. մարդկությունը բաժանված է տարբեր տեսակների — ռասաների, որոնք նույն անվախճան պայքարն են մղում իրար դեմ՝ հայտարարեցին նոր «գիտության» զինակիրները։

Նույն Դարվինի ուսմունքի անկյունաքարը կազմող մի քանի կատեգորիաները — բնական ընտրություն, ժառանգականություն և այլն, մեխանիկորեն տեղափոխելով հասարակական կյանքի բնագավառը, ֆինանսական կապիտալի այդ մունետիկներն ամենառեակցիոն եզրակացությունների հանգեցին, արդարացնելով և գովերգելով կապիտալիստական սիստեմի բոլոր զազրելի արտահայտություններն ու հետևանքները։

Այդ մարդակեր ուսմունքի «առաքյալները» պղծեցին և նոր գիտությունը՝ գենետիկան. գեն և այլ հասկացությունները դարձնելով մետաֆիզիկական կատեգորիաներ, նրանք «թեորիական» հիմնավորում արվին ֆաշիստական ապագա հրեշավոր պրակտիկային՝ «եվգենիկայի» և նրման այլ բնագավառներում։ Այդ բոլորին զուգահեռ ամենացինիկ, ամենասանձարձակ կերպով խարդախելով կուլտուրայի պատմությունը, ակնհայտորեն կեղծելով հանրածանոթ փաստերը, նրանք ուզում էին «ապացուցել», որ մարդկության բոլոր հանճարներն ուղղակի կամ անուղղակի «հյուսիսային գերմանական ռասայից» են սերում։

Հիտլերը որդեգրեց այդ ուսմունքը և ֆաշիստական տրամաբանությամբ հարդարած, հրամցրեց իր հոգևոր հոտին։ Այդ «թեորիան» չի հոգնեցնում ուղեղը, չափազանց դյուրըմբռնելի է նա։ Այդ «թեորիայով» հնարավոր է մի ժամում գիտնական դառնալ, նա ոչինչ չի բացատրում, որովհետև ամեն

ինչ է բացատրում, ամեն ինչ այլանգակում, աղճատում, նենգափոխում։ Հիտլերը դեն է ձգում այդ «թեորիայի» գելերտերական գրաղեոլոգիան — իսկ-քը չի հասնում, սաղական էլ չէ մերկապարանոց սրիկային — նա շարադրում է «գիտնականների նվաճումների» հեշտացրած վարիանտը։

Ի՞նչ է հայտարարում այդ բանդիտ-«սոցիոլոգը»։ Մարդկային հասարակության պատմությունը տարբեր ռասաների պայքարի պատմությունն է։ Գոյություն ունեն բարձր և ցածր, լիարժեք և թերարժեք ռասաներ։ Ամենաբարձր, լիարժեք, ազնիվ ռասան — դա գերմանական ռասան է։ Այդ ռասան է, որ ստեղծել է բոլոր կուլտուրական արժեքները։ Գերմանական ռասան, որ կոչված է իշխելու բոլոր ռասաների վրա, նա է, որ պետք է հրամայի, մյուսները պետք է ենթարկվեն։ Գերմանական ռասան պետք է պահպանի իր արյան մաքրությունը, ամենամեծ հանցանք է կատարում ամեն մի գերմանացի, գերմանուհի խառնելով իր ազնիվ արյունը ստորարժեք ռասայի ներկայացուցիչների արյան հետ։ Այդ ռասայի արյան զտությունը անխախտ կպահի նրա հոգեկան բարձրորակ հատկանիշները, հակումները։ Այս է բացահայտ մարդակերության երկար շաղակրատանքի կարճ իմաստը։

Դահճապետն այստեղ ևս ամբոխավարությամբ է զբաղվում. «զուտ գերմանական ռասայի» ներկայացուցիչներ նա համարում է իրեն և իր բանդիտներին, իսկ գերմանական ժողովրդին վերաբերվում է ծայրահեղ արհամարհանքով։ Իգուր չէ նա հայտնել, թե՝ «մասսան նման է անասունի, որը հետևում է իր ինստինկտներին և հաշվի չի առնում տրամաբանությունն ու խոհականությունը»։

Դեռևս վիլհելմյան ժամանակաշրջանի մի շարք լիբերալ գիտնականներ արհամարհանքով և հեգնանքով էին խոսում ռասայական «թեորիայի» մասին։ Նրանք ուժեղ, բայց, իհարկե, ոչ հետևողական քննադատության էին ենթարկում Ամմոններին և Գյունտերների կեղծ ուսմունքը։ Հանրածանոթ ճշմարտություն է, որ մարդկային հասարակության պատմության որոշ շրջանից սկսած՝ զուտ ռասայի գոյությունը մի միֆ է, որ ստեղծել են գլխավորապես գերմանական ռեակցիոն անտրոպոլոգները, որոնցից շատերը իրենք էլ ներքուստ համոզված էին իրենց «թեորիայի» խարդախ և ստահոդ լինելու մեջ։ Նույնքան հանրածանոթ է և այն ճշմարտությունը, որ այսպես կոչված հյուսիսային գերմանական կապտաչյա, շիկահեր, երկարագլուխ զուտ ռասա գոյություն չի ունեցել և չունի։ Բոլորին էլ հայտնի է, որ այժմյան գերմանացիների երակներում բազմաթիվ, իրարից էթնիկապես տարբեր, ժողովուրդների արյուն է հոսում։

Գիտության հեռ փոքր ի շատե կապ ունեցող ամեն մի բիոլոգ, հոգեբան և սոցիոլոգ գիտե, որ խոսել ռասայական մեծ յուն հոգեկան հատկանիշների մասին, նշանակում է շանտաժով զբաղվել, ռեակցիոն հեքիաթներ պատմել։

Այդպիսի մի շանտաժիստ է և Հիտլերը, որը ռասայական «թեորիան» գործադրելով իր՝ վարձկանի պարտքերը հատուցելու նպատակով, «նպաստավոր» մթնոլորտ է ստեղծում նրանով։ Թե որքան լուրջ է ընդունում այդ սողունը գերմանական «ազնիվ» ռասայի և մյուս «ցածրարժեք» ռասաների մասին իր վայրահաջ շաղակրատանքը, ապացուցում է այն փաստը, որ հե-

տաղայում, երբ յապոնական սամուրայները ֆաշիստական Գերմանիայի դաշնակիցը դարձան, նրանք ֆաշիստ «գիտնականների» կողմից հռչակվեցին «արևելյան պրուսացիներ», «ազնիվ ռասայի արևելյան վարիանտ» և այլ նման «կոմպլիմենտներով»։ Մինչդեռ Մյունխենի լանդկնեխտը յապոնացիներին համարելով ոչ լիակատար մարդիկ, արհամարհանքով գրում էր նրանց մասին. «Եթե մի բոպե ենթադրենք, որ Ամերիկան և Եվրոպան կործանվել են, ապա Յապոնիայի արդի կուլտուրական զարգացումը կանգ կառնի և նա նորից կընկնի այն քնեածության մեջ, որից նրան 70 տարի առաջ արթնացրեց արիական կուլտուրական ալիքը»։

Գերմանական ֆաշիստապետն իր «թեորիայի» արդյունքը ցանկանում է ստանալ՝ կիրառելով այն առաջին հերթին հրեաների վերաբերմամբ։ Անտիսեմիտիզմը հիմարների սոցիալիզմ է, սիրում էր ասել Ֆերելը։ Ֆաշիստ մարդակերների պարագլուխ Հիտլերի հրեակերությունն անցնում է հիմարության սահմաններից։ Նա խելագարի բանդագուշանքներ է շաղակրատում, երբ խոսք է բաց անում հրեաների մասին։

Այդ դեգեներատն առանց ծխածածկոցի է դրսևորում իր գազանային հակումները, միջնադարյան մոտեցումները, երբ «քննարկում է» հրեական «հարցը»։

Կոնկուրենցիայի մեջ պարտված գերմանացի նացիոնալիստ խանութպանի մաղձն ու թույնը, իրենց բթամտությունը քողարկել ցանկացող «արիացի» պրոֆեսորների ու պրիվատ-դոցենտների կատաղի նախանձը, որոշ կարգի գերմանացի անհաջող բժիշկների, փաստաբանների, դերասանների, երգիչների և այլն իրենց ախոյաններից ազատագրվելու տենչը միախառնվում են հիտլերյան անտիսեմիտիզմի մեջ և ստանում լրիվ արտահայտություն։

Կառավարության գլուխ անցնելով՝ ֆաշիստ մարդակերն սկսեց կատաղորեն կիրառել իր «թեորիական պրինցիպները», բարբարոս սպառնալիքները։ Ամ-հարյուրյակային պոգրոմները մանկական խաղ են համեմատած այն ջարդերի հետ, որ ֆաշիստները կազմակերպեցին Գերմանիայում հրեաների վերաբերմամբ։ Տասնյակ հազարավոր հրեաների ամենաճիվաղային տանջանքների ենթարկելով՝ ոչնչացրին, մեռցածներին հասցրին պարիայի աստիճանին։

Հիտլերյան բանդիտիզմն այժմ լայն «գործունեության» դաշտ է գտել Լեհաստանում, Հարավսլավիայում և այլուր իր հրեաջինջ քաղաքականության համար։ Վարշավայում և Լոձում հրեական թաղամասեր են ստեղծվել, որոնք պատած են փշալարերով. հրեա ապաբախտ ժողովուրդը ենթարկված է դանդաղ ֆիզիկական մահացման։

Ճիվաղ Հիտլերը համոզմունքներ, պրինցիպներ չունի։ Համոզմունքներ և պրինցիպներ ունեցող մարդիկ չեն կարող գոյություն ունենալ ֆաշիստ բանդիտների շարքերում։ Նա սիկոֆանտ է, ծախված գրչակ, մարզված բանդիտապետ, որն արհամարհում է պրինցիպներ ունեցող մարդկանց, հիմար ու միամիտ համարելով նրանց։ Ուստն ու զրպարտությունն են նրա զենքերը, նա ցանկանում է միայն իր հետևից գնացող մասսային, որն այլ կերպ չպետք է մտածի, քան իր հիվանդ ուղեղի թելադրած հրահանգներով

ու ցուցումներով։ Նա հրամայում է ջարդել ու փշրել այլ կերպ մտածողներին։ Տրամաբանության վերջին մեծագործները կորցրած այդ ճիվաղը «Իմ պայքարի» մեջ սրտախառնություն պատճառող ամբոխավարությամբ ուզում է ապացուցել այն, ինչին ինքն էլ չի հավատում։

Գերմանիայում ութ հարյուր հազար հրեա կար, որի մի չնչին տոկոսն էր պատկանում շահագործող դասակարգին։ Այդ փույթ չէ Հիտլերին։ Իր կեղտոտ գրքի էջերը նա լցնում է զրպարտությամբ ու խարդախություններով, որպեսզի «ապացուցի», թե գերմանական ժողովրդի տնտեսական ծանր վիճակի պատճառն առաջին հերթին գերմանական հրեաներն են։ Ըստ Հիտլերի՝ նրանք միացել են աշխարհիս բոլոր հրեաների հետ և մտադրվել քայքայել Գերմանիան, ոչնչացնել նրա կենսական ուժերը։ Իհարկե, նա խորշում է վիճակագրական տեղեկություններից, փաստական տվյալներից։ Նա «գործի» է դրել միայն ռասայական «թեորիան» և իր քաղաքական մարդակեր զառանցանքները։ Ձեռները կանթած՝ բաղարում առևտուր անող կնոջ պես՝ նա սիրում է իր հակառակորդին միայն հայհոյել, զրպարտել, սպառնալ։

Աջակցեցեք ինձ,—դիմում է նա իր կողմնակիցներին և հիմարացրածներին,—որ՝ ես կառավարության գլուխ անցնեմ և այն ժամանակ կտեսնենք, թե ինչպես կերջանկացնեմ գերմանական ժողովրդին։ Հրեական ունիվերմագները ոչնչացնելով՝ ես հնարավորություն կտամ տասնյակ հազարավոր իսկական գերմանացի առևտրականներին նորից վերսկսելու իրենց ձեռնարկությունները։ Հրեա բժիշկներին, փաստաբաններին, գիտնականներին, առևտրականներին, դերասաններին և այլն ճզմելով՝ ես լայն դռներ բաց կանեմ իսկական գերմանական ինտելիգենցիայի առաջ՝ արդյունավետ աշխատանքի անցնելու։ Այսպես էր ամբոխավարում եփված ժուլիկը։

Որ գերմանական բոլոր հրեաները կապիտալիստներ չեն, այդ ոչ միայն Հիտլերը գիտեր, այլև վերջին մանուկը. որ գերմանացի գործարանատերերն ու ֆաբրիկանտները, ածխահորերի տերերը ճիշտ այնպես են շահագործում գերմանացի և հրեա բանվորներին, ինչպես հրեա կապիտալիստները, այդ ևս անհայտ չպետք է լիներ Հիտլերին. որ հրեաները Գերմանիայում միայն կրոնական համայնք էին կազմում և հրեական «տենդենցներ» չէին հետապնդում ու ներգրավված էին ընդհանուր գերմանական սոցիալական կյանքի մեջ, այդ ևս գիտեին Հիտլերն ու իր արբանյակները։ Այդ այդպես լինելով հանդերձ՝ օբեր-բանդիտը խարում ու զրպարտում էր, որովհետև պարարտ հող էր գտել իր դժոխային մախինացիաների համար և համապատասխան դիմադրություն չէր ստանում իր «մշակման» ենթակա մասսայից։ Ընդհակառակը, որքան ավելի շատ էր եռանդագործում ֆաշիստ ամբոխավարը, այնքան ավելի էր խորանում ու ընդարձակվում իր ազդեցությունն այդ ամբոխի վրա։ Անտիսեմիտիզմը գերմանական ֆաշիզմի համար այն կոյուզիներից մեկն է, որի մեջ հավաքվում էին գերմանական ռեակցիոն բուրժուազիայի քաղաքական միտքն ու տրամադրությունները։ Ինքը՝ Հիտլերը գլխավոր ճարտարապետն է այդ կոյուղու, որը նա կառուցում է ռասայական «թեորիայի» ցուցումների համաձայն։

Բոլոր հրեաներին շահագործող դարձնելով՝ Հիտլերն աշխատում է

գրգռել «իսկական գերմանացի մարդկանց» գաղտնային ինստինկտները։ «Իմ պայքարը» կոչված աղբակույտի էջերից նա անլուր հայհոյանքներ ու զրպարտություններ է շպրտում մեծատաղանդ հրեա ժողովրդի հասցեին։ Հիտլերի հավաքական հրեան անազնվության ու ստորաքարշության, խարդախության և նենգության, խորամանկության ու բարոյական անմաքրության մարմնավորումն է։ Որտեղից է վերցրել նա այդ «հրեային»։ Հարկավոր չէ հեռու գնալ. այդ ամենը նա գտել ու դիտել է իր մեջ և իր նմանների շրջանում։ Կեղծիք կատարելով՝ նա իր հատկությունները վերագրում է ուրիշին։ Միջնադարյան հետույի այդ երկրպագուն, իսպանական ինկվիզիցիայի այդ սիրահարը քրեական հանցավոր է համարում ամեն մի հրեայի և կոչ անում ոչնչացնել «գերմանականության այդ երդվյալ թշնամիներին»։ Ամբողջ աշխարհը գիտե, թե ով է քրեական հանցագործի կլասիկ տիպը, իսկ գերմանական ժողովուրդը վաղուց ի վեր զգացել ու հասկացել է, թե ով է իր արյունարբու երդվյալ թշնամին։

Ֆաշիստական ավազակապետը ռասայական «թեորիան» օգտագործում է ոչ միայն գերմանական հրեաներին ոչնչացնելու պրովոկացիոն ագիտացիայի համար, այլև գերմանական բանվոր դասակարգի կոմունիստական պարտիայի դեմ արշավանք կազմակերպելու նպատակով։ Իր սահմանափակ ուղեղով նա ըմբռնում է, որ գերմանական բանվոր դասակարգը բնավ էլ տրամադիր չէ ականջ դնելու իր ռասայական շաղակրատանքներին, որ ֆաշիզմի միակ պրինցիպային հետևողական թշնամին—դա Կոմունիստական պարտիան է։ Չնայած իր թերուս լինելուն, նա այստեղից-այնտեղից լսել ու կարդացել է, որ այդ պարտիան ղեկավարվում է Մարքսի-Լենինի ուսմունքով։ Պարզ է, թե այդ կրետինը ինչպիսի ահռելի կատաղությամբ, ինչպիսի անզուսպ ատելությամբ պիտի վերաբերվեր դեպի իր մահացու թշնամին։

Նա տեսնում էր, թե ինչպես գերմանական բանվոր դասակարգի ամենառուջդ, ռևոլուցիոն տարրերն անցնում են Կոմունիստական պարտիայի կողմը, թե ինչպես գերմանական բանվոր դասակարգի լայն շերտերի համակրանքն օրեցօր աճում էր դեպի այդ պարտիան։ Այդ հանգամանքը մտահոգություն էր պատճառում Հիտլերին և նրա տերերին։ Նրանք գիտեին, որ Կոմունիստական պարտիան—դա սոցիալ-ֆաշիզմը չէր. վերջինս գաղանի աջակցում էր Մյունխենի հրոսակապետին և միայն, բանվորներին ձեռքից բաց չթողնելու համար, երբեմն առերես մի քանի թթու խոսքեր էր ասում ֆաշիզմի հասցեին։ Իր տերերից ստացած փողերով կազմակերպված գրոհային ջոկատները Հիտլերն օգտագործում էր բանդիտական հարձակումներ կազմակերպելով բանվորների, բանվորական կազմակերպությունների վրա։ Բայց այդ չի բավարարում ֆաշիստապետին, նա ցանկանում է բանվոր դասակարգին հարվածել նաև թեորիայի բնագավառում, նա իրեն խնդիր է առաջադրում «թեորիապես» հիմնավորել բանվոր դասակարգի վերաբերմամբ կատարած իր բանդիտական խժդժությունները, մոնոպոլիստական կապիտալի վարձու գրչակն ու ագիտատորը փորձում է իր ուժերը մարք-

սիզմի «քննադատության» մեջ։ Եթե բուրժուական պրոֆեսորները այդ գործին ձեռնարկելիս հիմարություններ ու տխմարություններ էին ասում, նրանք, համենայն դեպս, պարտք էին համարում կարդալ, յուրովի ուսումնասիրել մարքսիզմի կլասիկներին և ապա դուրս գալ պայքարի դաշտը։ Հիտլերն իսպառ զերծ է այդ «նախապաշարումից», նա երբեք չի կարդացել Մարքսին—ոչ ժամանակ է ունեցել, ոչ էլ խելքն է հասել—ինչ կարիք կա գլուխ ցավեցնելու, երբ գոյություն ունի ամենափրկիչ ռասայական «թեորիան», այսպես էր մտածում մտքից տկար հրոսակապետը և անցնում «գործի»։

Դասակարգ, դասակարգային կռիվ հասկացությունները—գա հրեաների կողմից է ստեղծված. հրեա Մարքսն է հնարել այդ բոլորը—հրեաներին օգնելու և գերմանացիներին ճնաշելու նպատակով։ Իրոք, գոյություն ունի միայն անընդհատ կռիվ ռասաների միջև—ահա գարեջրատնային «սոցիոլոգի» կատեգորիկ հայտարարությունը։ Սա է ֆինանսական կապիտալի վերջին. խոսքը։ Իդեական կրախն ակներև է. դժվար թե կարելի լինի երևակայել մի ավելի հիմար գարշելիություն և գարշելի հիմարություն, քան թե հիվանդ ուղեղի այս տխմար զառանցանքը։

Հոկտեմբերյան ռևոլուցիան Ռուսաստանում, Նոյեմբերյան ռևոլուցիան Գերմանիայում, Բավարական Սովետական իշխանությունը—դրանք բոլորը հրեաների—մարքսիստների չարագործության արդյունք են,—հայտնում է պոգրոմային գործերի վարպետը։ «Իսկական գերմանացի մարդը» երբեք ռևոլուցիոն շարժման կողմնակից լինել չի կարող, նրա արյունը կբողոքի ռևոլուցիայի դեմ։ Գերմանացի բանվորները մոլորվել են, ընկել են հրեաների—մարքսիստների ազդեցության տակ։ Մենք պետք է օգնենք նրանց, որ ազատագրվեն մարքսիզմի լծից։ Ով կգիտակցի, որ ինքը սխալվել է և կանցնի մեր կողմը, մենք նրան կներենք, իսկ ով դավաճանել է և շարունակում է դավաճանել գերմանականությանը և անուղղելի է, մենք նրան կոչնչացնենք։ Այսպես էր սպառնում դարչնագույն տանը նստած դահիճը։

«Իսկական գերմանական մարդկանց» սրտից էր խոսում նրանց առաջնորդը։ Հիտլերի այս գրույթներով ոգևորվում էին բոլոր նրանք, ովքեր գերմանական ռեակցիայի կողմնակիցներ էին, ովքեր դողում էին սոցիալիստական ռևոլուցիայի հեռանկարներից, ովքեր կառչում էին հին Գերմանիայի «արժեքներին» և ձգտում՝ վերականգնել նրա կորցրած ռազմաշունչ, միլիտարիստական ուժը՝ «հին փառավոր պլանները» ի կատար ածելու համար։

Բյուրեղանում էին գերմանական հասարակական երկու բանակ—ֆաշիստական և պրոֆաշիստական միասնական ճակատին՝ իրերի բնական ընթացքով՝ հակադրվում էր ռևոլուցիոն, հակաֆաշիստական բանակը։ Բոլոր նրանք՝ բանվոր, գյուղացի, ինտելիգենտ՝ ովքեր զգում էին վերահաս վտանգը, ովքեր ցանկանում էին դեմ առնել ֆաշիստական կեղտոտ ալիքին և բարձր պահել դեմոկրատական Գերմանիայի դրոշը, լցված էին կատաղի ատելությամբ դեպի կապիտալի անարգ վարձկանները, մարտական արամադրությամբ էին տոգորված սվաստիկայի կրողների դեմ։

1933 թվին կառավարության ղեկը տվին Հիտլերին, և նա պետության

անունից իրագործեց «Իմ պայքարի» մեջ ձևակերպած իր սպառնալիքները։ Հիտլերը պետական բանդիտիզմ էր նախապատրաստում։ Ջարդաբարությունը սկսեց կիրառվել ֆաշիստական պետության օրգանների կողմից։ Գեստապոն ոչնչացրեց գերմանական բանվորության բոլոր կազմակերպությունները։ Արյունոտ տեռորը մոլեգնում էր ամբողջ երկրում։ Ֆաշիզմը կացնով գլխատեց և կոնցենտրացիոն լագերներում ոչնչացրեց բանվոր դասակարգի ընտիր մասը, ձեռնամուխ եղավ բանվորական երիտասարդ սերնդի քաղաքական ու մտավոր անբարոյականացման, այլասերման ծրագիրն ի կատար ածելուն։

Ռուրի մագնատները և պրուսական կալվածատերերը հիմա կարող էին հանգիստ լինել. իրենց վարձկանը և հովանավորյալը հաջող կատարեց իր դերը։

Գարեջրատների հռետորը, բավարական ոստիկանության ագենտ-պրովոկատորը, գերմանական կանցլեր դառնալով, «խաղաղացրեց» երկիրը և սկսեց ֆաշիստական արտաքին քաղաքականության ծրագրի իրականացման միջոցները նախապատրաստել։ Հուրը և սոռը կորոշեն գերմանական «ազնիվ» ռասայի բախտը, անհրաժեշտ է ոչնչացնել Գերմանիայի թշնամի—բոլոր երկրների հրեականությունը—մարքսիզմը։ Սա է պետական օրեր-դահճի նշանարանը։ Ամեն ինչ պատերազմի համար, յուրաքանչյուր գերմանացի ղոլդատ պիտի դառնա «ազնիվ ռասայի» պատմական ծրագիրն իրականացնելու համար, Գերմանիան կոչված է բոլորին հրամայելու, օտարը գոմաղբ է գերմանական դաշտերը պարարտացնելու համար։ Այս շովինիստական խելակորույս մեծագերմանականության մտայնությունը պարտադիր է երրորդ իմպերիայի քաղաքացիների համար։

Արտաքին քաղաքական խնդիրներով էլ է զբաղվում գեստապոյի ոգեվորիչ Հիտլերը «Իմ պայքարը» վիժվածքի մեջ։ Ինչպես բոլոր մյուս հարցերի պրինցիպային կողմը լուծելիս նա գողությամբ է զբաղվում՝ ուրիշների ասածը հարմարեցնելով իր «ստեղծագործական» կարողություններին և փողոցի ճաշակին, այնպես էլ արտաքին քաղաքականության խնդիրները «շոշափելիս» նա վառոդ չի հնարում, այլ կրկնում է վիլհելմյան որոշ գեներալների և քաղաքագետների նվաճողական ծրագրի հիմնական կետերը։ Տարբերությունը մի պրուսական սոլդաֆոն Հոֆմանի և բանդիտ Հիտլերի միջև այն է, որ առաջինը հարցին մոտենում է ավելի շուտ որպես զինվորական, երկրորդը բաց է անում բոլոր փակագծերը և երկրներ զավթելու, ժողովուրդներ ստրկացնելու, կուլտուրա ոչնչացնելու քաղաքականության «իդեոլոգիական հիմնավորումը» տալիս։

Հիտլերի ցինիզմը, անսքող ավազակային ձգտումներն այստեղ ավելի ոելեֆ են դրսևորվում։ Նա ընթերցողի առաջ բաց է անում մի ամբողջ բանդիտական ծրագրի ուղն ու ծուծը։ Գրավիր, զավթիր, կողոպտիր, թալանիր. բռնաբարիր, փշրիր, ջարդիր, օտարը քո ստրուկն է, դու նրա տերը, —այսպես է հրամայում Հիտլերը «ազնիվ ռասայի» երկոտանի գազաններին։ Ֆաշիստ բորենին գովերգ է կարդում ռասայական, այսինքն իմպերիալիստական, շովինիզմին և հպարտանում, որ ինքը այդ «գովելի» մտայնության մունետիկներից մեկն է։ Նա ծաղրում, միամիտ, շաղակրատ է անվանում

այն մարդկանց, որոնք մարդկային սրբազան իրավունքի մասին են խոսում կամ հոգուտ մանք ազգերի ձայն բարձրացնում։ Կա միայն մի իրավունք, —«ազնիվ գերմանական ռասայի» իրավունքը, մյուսներն արժանի չեն իրավունք ունենալու—ահա հիտլերյան գազանային տրամաբանության լիակը։

«Բարու և չարի սահմաններից դուրս» պիտի լինի քո կատարած գործողությունների արժեքը, դու բարոյական ոչ մի չափանիշ չպետք է ունենաս, բացի նրանից, որ ուրիշները քեզ համար պատվանդան լինեն, որի վրա կանգնած՝ դու կարողանաս բարձրանալ—այսպես է գիտում իր երևակայական գերմարդուն ռեակցիոն փիլիսոփա Նիցշեն։ Բանաստեղծական քողի տակ պարուրված այս նշանաբանը, ինչպես հայտնի է, գերմանական յունկերներն ընդունեցին իրենց համար չափած ու ձևած, և իրավունք էլ ունեին այդպես ըմբռնելու, քանի որ փիլիսոփան իր պոետական բարձունքներից իջնելով՝ իր ձեռը նրանց պիտի մեկներ։ Նիցշեի բավարական գործակատար Հիտլերի աչքում հնացած է նրա պաթետիկ պատկերավորությունը, նրա բարձր ոլորտում սավառնելը։ Հիտլերը ցանկանում է պրոզայի սահմաններում մնալ և պրակտիկ քաղաքականությամբ զբաղվել, իր սոցիալական «միսիայի» բնույթը հարկադրում է նրան նախորոշ նախապատրաստական աշխատանք տանել։ Նա միստիֆիկացնում է բոլոր ռեալ հարաբերությունները, սիրով օպերացիաներ է կատարում «առողջ ինստինկտներ», «ընտրյալ ռասա», «համաշխարհային հրեականություն», և այլ նման կատեգորիաներով և հեծած իր վայրագ ռասայական «թեորիայի» նժույգին, հրահանգներ է տալիս պատմությանը՝ այնպես շարժվելու, ինչպես ինքն է ցանկանում։ Նա զոռ է տալիս իր հիվանդոտ երևակայությանը և ապագայի հրապուրիչ պատկերներ ստեղծում։

Մոնոպոլիստական կապիտալի վարձկանն այստեղ ևս աշխատում է քողարկել իր իսկական «կոչումը», իր ձգտումների էությունը։ Իր ջարդարար-քաղաքական ծրագիրը ընդունելի դարձնելու նպատակով՝ նա, որպես հղկված ամբոխախոս, անհրաժեշտ է համարում խոսել գերմանական ժողովրդի կարիքների մասին և իրեն այդ ժողովրդի բարեկամի, նրա ցավերի կարեկցողի դերում հանդես բերել։

Ռասայական «հիմնավորման» համապատասխան դոզան շաղակրատելուց հետո, Կրուպների և Կլեկներների հավատարիմ դյադան սկսում է պրոզայիկ լեզվով բարբառել։ Նա դիմում է մի արգումենտացիայի, որը նմանապես նորություն չի ներկայացնում և բազմիցս կրկնվել է այն բոլոր «գերմանական գործի փաստաբանների» կողմից, որոնք քողարկված կամ անաքող ձևակերպել են գերմանական իմպերիալիզմի ձգտումները։

Սկսած գերմանական կոնսերվատորներից, մինչև սոցիալ-ֆաշիստները պակաս չեն եղել ծառայական քաղաքագետներ, որոնք կոչ են արել „Drang nach osten"—«ձգտում դեպի արևելք»։ Հիտլերը տարբերվում է դրանից ոչ այնքան իր արգումենտացիայով, որքան իր մերկապարանոց ցինիզմով, այն, ինչ իր նախորդներն ասել են հաճախ ակնարկներով, նա հայտնում է պարզ ու մեկին, այն, ինչ ուրիշներն աշխատել են պատճառաբանել բարձր

«գաղափարական» միջոցներով, նա ձևակերպում է ռասայական ծխածածկոցի տակ։

Ո՞րն է դեպի արևելք գրոհելու այդ ծրագիրը։ Գերմանական տերիտորիան չափազանց նեղ է գերմանացիներին կերակրելու համար։ 20 միլիոն գերմանացի ավելորդ են իրենց երկրի մեջ, նրանք պետք է արտագաղթեն, որ մյուսների համար ավելի լայն տեղ բացվի։ Գերմանիան պետք է ընդարձակի իր տերիտորիան։ Նոր տերիտորիան կարելի է գրավել միայն պատերազմի միջոցով, ուստի պետք է նախապատրաստել այն. Գերմանիան պետք է մի մեծ զորանոց դառնա։ Այդ տերիտորիան Գերմանիան պետք է նվաճի ոչ թե հարավում, կամ արևմուտքում, այլ արևելքում։

«Իմ պայքարը» մարդատյաց գրքույկի մեջ Հիտլերը գրել է. «Որոշելով նոր հողեր ձեռք բերել Եվրոպայում, մենք կկարողանայինք այն ստանալ ընդհանուր առմամբ միայն Ռուսաստանի հաշվին։ Եվ այս դեպքում մենք պետք է որ գոտեպնդվելով առաջ շարժվենք նույն ճանապարհով, որով մի ժամանակ գնացել են մեր օրդենների ասպետները... Երբ մենք խոսում ենք Եվրոպայում նոր հողեր նվաճելու մասին, մենք, իհարկե, կարող ենք նկատի ունենալ առաջին հերթին միայն Ռուսաստանը և նրան ենթակա ծայրամասային պետությունները»։

Ահա այդ թալանի և կողոպուտի ծրագրի պարունակությունը և «հիմնավորումը»։

Հիտլերի նախորդներն իրենց ծրագիրը հղացել էին այն ժամանակ, երբ իշխում էր ցարիզմը։ Հիտլերը կրկնում էր նրանց, երբ մեր լայնածավալ երկրում հաստատվել էր Սովետական իշխանությունը։

Այդ հանգամանքը դյուրացնում է Հիտլերի «գործը»։ Նա կարող է ավելի «ծանրակշիռ արգումենտներ բերել» իսկական գերմանական մարդկանց մտայնությունը մշակելու կապակցությամբ։ Բավարական չինովնիկի և պրուսական բթամիտ յունկերի տրամաբանությամբ նա գրի է առնում իր խորհրդածությունները—Արևելքում բոլշևիկների իշխանություն է, բոլշևիկները նույն հրեաները—մարքսիստներն են։ Բոլշևիկյան ոգին բոլոր երկրների հրեականության ձգտումների արտահայտությունն է։ Հին Ռուսաստանի պետականության կազմակերպողները և հիմքը գերմանացիներն էին, հիմա նրանք չկան, այդ երկրում այլևս պետականություն չկա։ Հարկավոր է ոչնչացնել բոլշևիզմը Ռուսաստանում, վերականգնել գերմանական իշխանությունը, իսկ Ռուսաստանի արգավանդ հողերի վրա բնակեցնել գերմանացիներ։

Ֆաշիստական բանդիտապետը կաննիբալական պար է բռնում, երբ խոսք է բաց անում սլավոնների, մասնավորապես ռուսների մասին։ Ահա թե ինչ «մտքեր» է հայտնում նա. «Եթե մենք ցանկանում ենք ստեղծել մեր գերմանական մեծ իմպերիան, պետք է նախ և առաջ դուրս մղենք և ոչնչացնենք սլավոնական ժողովուրդներին—ռուսներին, լեհերին,չեխերին, սլովակներին, բուլղարներին, ուկրաինացիներին, բելոռուսներին։ Ոչ մի պատճառ չկա այդ չանելու։ Բոհեմիայի և Մորավիայի ավազանները, Գերմանիայից անմիջապես արևելք ընկած տերիտորիան կգաղութացվեն գերմանացիներով, իսկ այդ տերիտորիայի բնակչությունը մենք կքշենք Սիբիր։ Այդ նպատակն

իրագործելու համար ես չեմ վարանի և ոչ մի վայրկյան իմ խղճին ընդունելու երկու կամ երեք միլիոն գերմանացիների մահը։ Մենք մտածում ենք հաստատել մեր մշտական տիրապետությունը և այնպես ամրապնդել այն, որ նա առնվազն մի հազար տարի տևի։ Մեր միսիան այն է, որ հպատակեցնենք ուրիշ ժողովուրդներ։ Գերմանական ժողովուրդը կոչված է աշխարհին նոր տիրակալների մի դասակարգ տալու»։

Բավական պարզ և հստակ է հայտարարում բանդիտն իր վայրագ տխմարությունները և մարդակեր ձգտումները։ Այս մտագործի մտայնությունը կերակրվել է «իսկական գերմանական պատմարանների» բրոշյուրներով, ավստրիական քրիստոնեական սոցիալիզմի խոհանոցում պատրաստված հոտած կարկանդակներով, բուրժուական պրովոկացիոն հեռագրական գործակալության մատուցած «բագերով»։ Նրա քաղաքական մտքի օրորոցի վրա դայակություն են արել ռասայական «թեորիայի» բաճկոն հագած գազանները, գարեջրից ուռած պանգերմանիստ սև հարյուրակայիններ, պրուսական «տրադիցիաների» ջերմ երկրպագուներ Լյուդենդորֆներն ու Հոֆմանները։ Նրան ոգևորել ու նեցուկ են հանդիսացել բավարական կուլակների լակոտները, արյունոտ շուն Նոսկեի և Էրհարդի բանդիտները։ Նրան օրինակ է ծառայել եզվիտականությունը և մաքիավելիզմը։

Բանգիտ հեղինակը չվարձատրված չմնաց։ 1933 թվին նրան Բիսմարկի բազկաթոռն առաջարկեց գերմանական ամենակատաղի ռեակցիան, նրան վահանի վրա բարձրացրին գերմանական իմպերիալիզմի աշխարհակալական ձգտումների «հերոսները», ռազմական մատակարարումներով գեղեցիկ անելու ախորժակ ունեցողները։

Հիտլերը ձեռնարկեց նրանց ծրագիրն ի կատար ածելու։ Այսօր ամբողջ Եվրոպայի ժողովուրդները հեծում են ֆաշիզմի արյունոտ կրունկի տակ, «ռասայական» թեորիան իր օրգիաներն է սարքել, ավերն ու կոտորածը, թալանն ու կողոպուտը ֆաշիստ-բանդիտները Գերմանիայից տեղափոխել են ուրիշ երկրներ։

Այսօր Հիտլերն իր արշավանքն է սկսել Արևելքի, մեր երկրի, բոլշևիզմի դեմ։ Բայց նա սխալվել է իր հաշիվների մեջ, դա նրա վերջին ջղային ցնցումներն են. նրա ատամները կջարդվեն Սովետական զրահից։

Որքան էլ նա վայրահաջի գերմանական ժողովրդի անունից, այդ ժողովուրդը, որին նա ստրկացրել է, նրա հետևը չի կանգնած։ «Ժողովրդի աջակցությունը» նա պետք է հանի իր բառարանից։

Ֆաշիզմը դատապարտված է պատմության կողմից, մեծ կլինի գերմանական և եվրոպական ժողովուրդների ցասումը։ Հիտլերն իր հորդաները նետեց մեր երկրի վրա, դա բանդիտիզմի-ֆաշիզմի վերջին ավանտյուրան կլինի։ Նրա բանակը հարձակվել է սովետական մեծ ժողովրդի բանակի վրա, որն իր հերոսական մեծ կռիվն է մղում գլուխը կորցրած հրոսակապետի բանակների դեմ։

«Նա միայն երկու բանակների միջև մղվող պատերազմ չէ։ Նա միաժամանակ ամբողջ սովետական ժողովրդի մեծ պատերազմն է գերման-ֆաշիստական զորքերի դեմ։ Ֆաշիստական կեղեքիչների դեմ մղվող համաժողովրդական այս հայրենական պատերազմի նպատակն է ոչ միայն վերաց-

նել մեր երկրի վրա կախված վտանգը, այլև օգնել Եվրոպայի բոլոր ժողովուրդներին, որոնք հեծում են գերմանական ֆաշիզմի լծի տակ։ Այս ազատագրական պատերազմում մենք մենակ չենք լինի։ Այս մեծ պատերազմում մենք հավատարիմ դաշնակիցներ կունենանք, հանձինս Եվրոպայի և Ամերիկայի ժողովուրդների, այդ թվում ի դեմս գերմանական ժողովրդի, որին ստրկացրել են հիտլերյան պարագլուխները»։ Այդպես ասաց սովետական ժողովրդի սիրելի առաջնորդն իր պատմական կոչի մեջ։ Ընկեր Ստալինի հետ միասին սովետական երկու հարյուր միլիոնանոց ժողովուրդը և ամբողջ աշխարհի ազատատենչ մարդիկ համոզված են, որ հիտլերյան բանակները կջարդվեն Կարմիր Բանակի հուժկու հարվածների տակ։

Կատաղած շանը ոչնչացնում են. ֆաշիզմը կոչնչանա։ Մեր գործն արդար է, մենք կհաղթանակենք։

8 հուլիսի 1941 թ.
Երևան